

Մ Տ Ե Ր Ի Մ Ժ Ո Ղ Ո Վ Ր Գ Ե Ա Ն

Շաբաթը երկու անգամ
կը հրատարակուի :
Ստորագրութեան տեղն
է Իմամ Ալի խան վա-
րի յարկը թիւ 15 :



Տարեկան գինն է կանխիկ
դրուշ 400 :
Դուրսերէն բաժանորդ
էղողները փոստային
ծախքը վճարելու են :

15 ԱՊՐԻԼ

Գ. ՏԱՐԻ 1863

ԹԻԻ 7—8

Ի Վ Ե Ր Ա Հ Ա Ս Տ Ա Տ Ո Ւ Թ Ի Ի Ն

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ա Կ Ա Ն Օ Ր Ի Ն Ա Յ

Եթէ Աթէնք պանծայ թէ սոսկ յիւր վերայ ,
Ծփան ըսողները կուտին չըքեղ Սատրէայ .
Արդարութեան գողցես պաշտպան աջ մ' ալ կայ ,
Հովանի՛ չուրջ ոլորտիցն Եդեմայ :

Մննդիւն վահան ,
Իրաւանց Հայկեան .

Դա պերճ փառացն 'ի փոյթ կանգնել յաղթանակ ,
Թողուց պանծալ բուռն բազկաց զարբանեակ .
Ճայթեց վրէժ երբ զանձանց ոչ չափն յիշեցին ,
Անկան Ազգ—դաւք սուղան խորհուրդք վիշապին :

Եւ կառաւիք վատ կան ,
Ոտիցն ի կոխան .

Բացան դրունք բացան ընթացք երջանիկ ,
Ի Հայս յաւէտ դարնան օրեր դեղեցիկ .
Յնձան թող Հայք դարուց ի դարս եւ երգեն ,
Յորչափ ժպտի Հայկն յապտեղաց կամարէն :

Զի արդ նոր օրէնք ,
Տուան բիւր օրհներ :

Ս . Թ .

Մ Ա Ս Ի Ս

Ե Ի Ա Ր Ե Ի Ե Լ Ե Ա Ն Թ Ա Տ Ր Ո Ն

Տ Ե Ս Թ Ի Ը , 6 :

Թատրոնին տնօրէնութեան խաբէ-
բայ ըլլալուն կամ չըլլալուն , Ժողովուր-
դին ստակն առնելով վրան խնդալուն
համարելով , ապիկարութեան կէտին
գանդ : Միայն կ'ըսենք թէ դործ մը հա-
րեանցի տեսնութեամբ և տաք գլխով տես-
նելով , ուզած դատողութիւնն ալ վրան
աւելցնելով հրապարակագոյժ ընելուն ,
նեղին մեղի մեր բարեկամները , յանգ-
նութիւն կ'ըսուի , և ամօթ է :

Մասիսի արգոյ խմբագիրը դերա-
սաններուն զանցառութենէն , իբրեւ
դործ 'ի պատճառէ , կը հետեցնէ թէ ու-
րեմն տնօրէնութեան անոնց վրայ ազդե-
ցութիւն չունենալէն է , ապա տնօրէնու-
թիւնն ապիկար է :

Արգոյ խմբագիրն առջի ըսածներուն
մէջ հապճեպով անիրաւ դատաստան
կ'ընէր . հոս նոյն հապճեպով տրամա-
բանական սխալ մը կ'ընէ : Ահա Մա-
սիսին խօսքերը . “ Գուցէ մեղի առարկէ
մեր պատուական բարեկամը թէ դերա-
սաններուն բռնած անվայել ընթացքը
և անոնց վերաբերեալ թերութիւնները
Տնօրէնութեան չեն վերաբերիր : Այս
առարկութեան կը պատասխանենք թէ
Թատրոնին դերասանաց և դերասանու-
հեաց իրենց պարտուցը սահմանը չճանա-
չելը մեզ անձանօթ չէ . բայց ասկէց ալ
կը հետեւի որ տնօրէնութիւնը դերասան-
ներուն վրայ ազդեցութիւն չունի , և այս
ալ տնօրէնութեան ապիկար անձեռնհա-
սութիւնը կը յայտնէ : Ապա թէ ոչ , կը
պարտաւորինք ըսելու թէ տնօրէնութիւնը
ինք տեղի կուտայ անոնց ղեղձմանը կամ
աչք կը դողէ կամացը : Արգոյ խմբագիրը
ըսել կուզէ . Գերասանները զանցառու են
քանզի տնօրէնութիւնը կամ ապիկար է
և կամ անհոգ : Եթէ դերասաններուն

զանցառութիւնը տնօրէններուն ապիկա-
րութենէն կամ կամաւոր անհոգութենէն
կը հետեցնէ իբր դործ 'ի պատճառէ , ապա
հարկաւ տնօրէններուն ապիկարութե-
նէն և զանցառութենէն ալ դերասան-
ներուն զանցառութիւնը պիտի հետեցը-
նէ , իբրեւ պատճառ 'ի դործոյ : Ասկէ սա
տրամաբանութիւնը կ'երէ . Գերասան-
ները զանցառու են քանզի տնօրէնու-
թիւնը ապիկար կամ անհոգ է . Տնօրէ-
նութիւնը ապիկար կամ անհոգ է , քան-
զի դերասանները զանցառու են : Ասոր
կ'ըսուի նոյնը նոյնով ցուցնել կամ յոռի
չըման : Աս սխալ տրամաբանութիւնը կը
նէ մեր արգոյ խմբագիրը , քանզի կ'են-
թաղրէ թէ դերասաններուն զանցա-
ռութեանը պատճառը ուրիշ բան չի կըր-
նար ըլլալ եթէ ոչ տնօրէնութեան ապի-
կարութիւնը կամ անհոգութիւնը , անոր
համար ալ իր աս փաստը երկասրբաբա-
նութեան ձեռով դրած է . տնօրէններուն
ապիկարութիւնը կամ անհոգութիւնը
իբր հարկաւոր պատճառ դերասաննե-
րուն զանցառութեանը , ուստի և իբր
ճշմարտութիւն , կ'ենթադրէ : Բայց
արդեօք . դերասաններուն զանցառու-
թիւնը ուրիշ պատճառ մը չի՞ կրնար
ունենալ : Արգոյ խմբագիրը պէտք էր
նախ ապացուցանել և հաստատել թէ
տնօրէններն ապիկար կամ անհոգ են ,
անկէ ետքը կրնար ուղիղ հետեւութեամբ
ըսել թէ , անոր համար ալ դերասաննե-
րը զանցառու են :

Մենք հոս պիտի ցուցնենք թէ դե-
րասաններուն զանցառութեանը պատ-
ճառն ինչ է . և պէտքէ գիտնալ որ Թատ-
րոնին բուն թերութիւնը մէկուն օթ-
եաին ուրիշի վարձելուն , գաւազան կոր-
սուելուն , գուսանուհոյ մը երգելը ետ
մնալուն , խոստացուած խաղի մը տեղ
ուրիշ խաղ տրուելուն մէջ չէ : Ասոնք
կամ սխալմունքն մը յառաջ եկած դէպ-
քեր են . և կամ անախկալ պատահարի
մը պատճառէ ծագած , և բոլոր եղա-
նակին մէջ հաղիւ թէ քանի մը անգամ

տանը չի նմանիր : Տանուտէր մը կամ վաճառական մը իր սպասաւորը կամ պաշտօնեան երկու անգամ խրատելու կարօտ չէ . հատու միջոցն իր ձեռքն է . եթէ վնասելու ըլլայ, ուզածին չափ և ուզածէն աւելին կրնայ գտնել : Բայց դերասան մը արուեստագէտ է . և այնպիսի արուեստագէտ մը որ յատուկ դերի մը յարմարութիւն ունի, և իր յարմարութեանը մէջ անուն և համակրութիւն ստացած է . անոր տեղ ուրիշ մը դրժուարաւ կրնաս գտնել : Արդոյ խմբագիրը թող թատրոն մը օրինակ ցուցնէ մեզի ուր ծառայ կամ աղախին փոխելու պէս շարունակ դերասան կը փոխուի : Թատրոններու մէջ դերասան չեն փոխեր, այլ դերասաններն իրենց պարտաւորութեանը կը բռնադատուին : Դերասաններուն տնօրէնութեան հետ յարաբերութիւնը ծառայի և տիրոջ յարաբերութիւն չէ, ոչ ալ անոնց պարտաւորութիւն կատարելուն սկզբունքը՝ ազդեցութեան սկզբունքն է : Դերասաններուն յարաբերութիւնը ան տեսակ քաղաքային յարաբերութիւններէն է որոնք պայմանագրութեամբ կը կատարուին, և անոնց պարտաւորութեան կատարմանը սկզբունքը՝ օրէնքը, քաղաքային իշխանութիւնն է : Պայմանագրով եղած յարաբերութեանց մէջ ազդեցութիւն փնտռելը՝ աս տեսակ յարաբերութեանց բնութիւնը չգիտնալ է . որչափ ազդեցութիւն ունենամ պարտաւորս ի՞նչ պարտքը, կամ տանս վարձուորը տանս վարձքը ինծի չէր վճարէր, եթէ մեր երկուքին յարաբերութիւնը, թէ պարտաւորութեան և թէ իրաւանց մասին, օրինաց (որ հարկաւ պատժական մաս մ'ալ ունի) երաշխաւորութեանը տակ չըլլար : Դերասանաց և թատերապետաց յարաբերութիւնը իրօք ամեն տեղ աս երաշխաւորութեան տակ է . թատրոններն ալ իրենց ֆօթօ ունին, ինչպէս ամեն պայմանագրական յարաբերութիւն :

Հոս կը պարզուի ինչիւրը, և Արեւել


եան թատրոնին տնօրէնութեան յանցանքը կամ թերութիւնն աս է, որ աս յարաբերութիւնը օրինաց երաշխաւորութեանը տակ դնել չկամեցաւ : Դիտենք որ թատրոնին տնօրէնութիւնն իր պայմանագրութիւնները տուժական պայմաններով ասպհովելու և ձեռնհաս իշխանութեան քով վաւերացնել տալու քանի մը նկատուածներ ըրած է : Բայց տակաւին կ'ըսենք թէ պակաս խորհած է : Թերեւս տնօրէնութիւնը կը կարծէր թէ աս գործին մէջ իրաւանց և պարտաւորութեան կատարման սկզբունքը բարեկամութիւնը, քաղցրութիւնը կամ ըստ Արդոյ խմբագրին Մասիսի, ազդեցութիւնն է . ոչ, ալ օրէնքն է : Տնօրէնութիւնը կրնայ ըսել թէ դերասաններն իրենց պարտաւորութեանը բերելու համար ամենափոքր խստութիւնը պատճառեղաւ որ դերասանները տժգոհ եղան, տնօրէնութեան հետ թշամացան և բամբասեցին : Անոնք որ յաջողակ են, ուզեցին որ 'ի շնորհս իրենց յաջողակութեանը, իրենց ներողութիւն ըլլայ . անոնց եղած ամենափոքր ներողութիւնը տկարներուն ըմբոստանալու պատճառ եղաւ . այսպէս երբ խստութիւն ըրաւ, չարացան, երբ ներողութիւն ցուցուց, ըմբոստացան : Աս տնօրէնութեան տեղ Մասիսի ձեռնհաս կոչած անձինքն ալ ըլլային առանց քաղաքային իշխանութեան միջամտութեանը այսպէս պիտի ըլլար : Դերասանները տնօրէնութենէն միշտ ներողամտութիւն, անտեսութիւն կը սպասեն . ասով դերասանները դո՛հ կըլլան և ժողովուրդը տժգոհ . բայց իշխանութենէն ներողամտութիւն չեն կրնար սպասել, ոչ ալ եթէ խստութիւն տեսնեն, տժգոհ կրնան ըլլալ : Սկէն անկարգութիւն օրէնքով և իշխանութեամբ կը վերնայ, ամեն բարեբկարգութիւն օրէնքով և իշխանութեամբ կուգայ : Բայց վերջապէս օրէնքի և բարեկարգութեան առաջնորդողը փորձառութիւնն է :

արժան էր, ինչ որ գէշ տեսաւ՝ անօրէնութեան տուաւ. որ անիրաւ էր. մինջն գտնուեցան ոմանք որ գերասանուհւոյ մը կամ գերասանի մը բնական յաջողակութենէն կամ որ և իցէ զիրքէն յափշտակուելով այն աստիճան համակըրութիւն մը ուղեցին յայտնել, մինչև իր գերասաններէն պարտաւորութիւն տաճանձեւան համար անգամ տնօրէնութիւնը պահարակելու ելան։ Աս ոչ ապաքէն գերասանաց, գէթ գերասանի մը կամ գերասանուհւոյ մը, ըսել է թէ դուք ինչպէս որ ըլլաք մենք ձեզ պիտի արդարայնենք և տնօրէնութիւնը դատապարտենք։

Քիչ մը առաջ ըսինք թէ օրէնքի և բարեկարգութեան առաջնորդող փորձառութիւնն է. փորձառութիւնը, ամեն յառաջադիմութեան, քաղաքակրթութեան, մարդկային ազգը թէ անհատաբար և թէ համօրէն իր բարձր նպատակին տանող ան մեծ սկզբունքը. և թէ, իցի՛ւ, անոր փրկարար դասերուն մօտիկ ընել գիտնայինք։ Աստի մեր խորհրդածութիւնը վերջացնելով կ'ըսենք թէ, եթէ Սրբէլեան թատրոնին տնօրէնութիւնն իր աս գործին կարևորութիւնը կը ճանչնայ, եթէ գերասանաց և գերասանուհեաց պատուական խումբը աս գործին մէջ իր միտքը լուսաւորութեան ան կէտը հասած է որ թատրոնին ընկերական կարգադրութիւն մը ըլլալը կը զգայ, կը յուսանք թէ ամեն մէկն աս գործին մէջ տեսնուած փորձառութենէն իր դասը կ'առնէ և յաջորդ եղանակին մէջ գործը բոլորովին նոր ուժով իր ընթացքը կը սկսի։ Ապա թէ ոչ պիտի ըստիպուինք ըսելու թէ մեր բնաւորութեան մէջ տիրող ամեն բանէ ձանձրանալու օրհասական ախտը մեզ կը մղէ, և կամ թէ գէթ աս գործին համար դեռ մեր ժամանակը չէ. և ան առեն թող թատրոնին տնօրէնութիւնը, ազգասիրաց յուզարկաւոր արցունքովը, թատրոնին վրայ բեկեռեմէ հանգստեան մը կարգայ։

Ա. Մ. Գ.

ՏԳԻՏՈՒԹԵԱՆ ՀԱՃՈՅԻՆ



Տիեզերական օրինաց ինքնագոյութեան անբացատրելի զգացմամբն է որ տգիտութիւնը մեր հաճոյից մշտաբուդիս աղբիւրն եղած է։ Շատ բարոյականի վրայ գրողներ տգիտութիւնը սխալմանէ չեն ուղած կամ չեն կրցած զանազանել։ Տգիտութիւնը բնութեան գործն է, և շատ անգամ բարեքմբնէ մարդուս համար, սխալումը՝ մարդկային կարծեցեալ գիտութեանց պտուղն է, և միշտ չարիք մըն է, թող այս գրութեանս վրայ հակառակին քաղաքականութեան վրայ գրողներն որ կը պարծին արդի գիտութեանց վրայ, և անցեալ դարերու բարբարոսութիւնը մեզի օրինակ կը բերեն, տգէտները չեն որ աշխարհիս թափած արեանը պատճառ եղած են կրօնական հակաճառութեանց համար, տգէտները միշտ հանդարտ կը կենան, սխալման մէջ եղողներն են որ կը պարծին իրենց գիտութեանը վրայ և կ'ըսեն, Եւրոպական կրթութեան շարժեալ և տղայութեան սխալմամբ արմատացեալ "էս եմ առաջինը"։

Որչափ չարիք կը ծածկէ մեզմէ տգիտութիւնը որոնք մեր կենացը մէջ սիտի յայտնուին մէկ օր մը և անհրաժեշտ են, անհաստատութիւն բարեկամաց, դժբաղդութիւն, աղքատութիւն, զրկարտութիւն, ժամ մահուան որ այնչափ կը սարսափեցնէ զաշխարհս։ Եթէ տեղեակ ըլլար արարած մը այսչափ չարեաց՝ կեանքը դառն և ապրիլն անհնարին պիտի ըլլար։ Որչափ տգիտութիւնը բարեքմբն է մեզի համար, սիրոյ և բարեկամութեան խաբէութիւնը, յուսոյ ապագայ պատկերն, այն ջանքերն նաև որ գիտութեամբ կստացուին։ Գիտութիւնը իւր սկզբնաւորութեան ժամանակ կը յիշացնէ զմեզ երբ, միտքն դեռ լի է տգիտութեամբ, լուսոյ և խաւարի միութեան կէտն է որ կը շլացնէ մեր

իւր բարեպաշտութիւնը պիտի ճնշուի ,
 թէ իւր համբերութիւնը սաստիկ կեր-
 պով պիտի փորձուի , և իր անբիծ ու հա-
 մեստ ճաշակներն իւր կողակցին աշխար-
 հային պճնական և չնչին ճաշակաց զէմ՝
 պիտի դանձնայն ատեն իր տեսութիւնը
 ուրիշ կողմ կուղղէ :

Այսպէս ալ երիտասարդ աղջիկը որ
 ամուսնութեան կը պահանջուի կը տե-
 ղեկանայ թէ արդեօք ազատ պիտի
 ըլլայ կրօնական պարտքերը կատարելու ,
 եթէ իր ամուսնոյն վրայ պիտի դնուի ի-
 րաւախօհութիւն հաւատոյ և քրիստո-
 նէական զգացմունք , երկանք հարստու-
 թիւնը և պատիւները ի՞նչ օգուտ ունին
 կնոջ մը որ միշտ իւր ամուսնոյն հետ
 պիտի պարտաւորի իւր հաւատքը ուրա-
 նալու , և կամ իւր յարգած և պաշտած
 բաներուն զէմ ուղղեալ ամբարիշտ ու
 խեղ ծաղրաբանութիւններ լսելու :

Արդեօք ամուսնութիւնը մարմնոյն
 միութեանէն աւելի հոգւոյ և մտաց միութեան
 չէ՞ , և հոգւոյ , և սրտի , և մտաց
 միութիւն մը կրնայ ըլլալ , եթէ Աստ-
 ուած իւր շնորհիւր զայն չձեռնցնէ և
 հաստատուն չպահէ : Ուրեմն պէտք է որ
 խելացի աղջիկ մը , այն անձին հետ ուղե-
 ամուսնանալ , որ իրեն կրնձայէ կրօնք և
 հետեւաբար իրական երջանկութեան ե-
 րաշխաւորութիւնները : Այս է քրիստո-
 նէական ամուսնութիւնը բայց ցաւալին
 այն է՝ որ շատ հազուադիւտ է այսօր :

Բ .

Ուրիշ տեսակ ամուսնութիւն մըն ալ ,
 մտահաճութենէ մը կամ խենդ յօժարու-
 թենէմը առաջ կուգայ : Այս երիտասար-
 զը , խաղամու , խեղ , անկիրթ , դերահա-
 շատ է . բայց գեղեցիկ կերպեր ունի , ա-
 ղէկ կը ներկայանայ , խօսքերը ոսկեզօծ
 են , նշանածին անոյշ յարգանքներ կրնէ ,
 ասոնք բաւական են , որպէս զի քանի մը
 աղջկունք նախամեծար համարեն զինքը :
 Մի խօսիր անոր , շատ աւելի լաւ ամուս-
 նոյ մը վրայ , որուն բարքը կանոնաւոր ,
 քաղցր , և բնութեամբ մարդասեր է :
 Խաղալ չգիտէ , վեհերոտ է , զայն չու-
 ղէր , թէպէտ և շատ ձիւքեր ունի , իւր

ծնողացը ամէն թախանձանքները յամա-
 ուութեամբ կը ջրէ :

Սա աղջիկը , վէս , յանդիմանող , սե-
 թեթեալ ունայնասեր , ծոյլ , վատա-
 համբաւ է . բայց աղւոր մազեր ու գեղե-
 ցիկ հասակ մը ունի . զլխարկը ու ժապաւ-
 լէնները պշտանօք (քօթէդման) կ'յար-
 դարէ , հրապուրիչ է , ասոնք անմիտ ե-
 րիտասարդի մը ընտրութիւնը հաստա-
 տելու բաւական են . եթէ ամուսնու-
 թիւնը տասնը հինգ կամ քսան օրուան
 բան մը ըլլար , այդ մտահաճութիւնը նե-
 րելի կըլլար . բայց երբոր կենաց հարկա-
 ւորութիւնները և վիշտերը զգալի կըլ-
 լան և խնայութիւն կը պահանջեն . ձեռ-
 նարկութեանց մէջ առաջնորդութիւն ,
 պիտի տեսնէ ամուսինը որ կնկան մը
 աղւոր աչուրները , տան տիկնոջ մը ա-
 ռաքինութեանցը չեն հաւասարիր , և կի-
 նը իւր թշուառութեանը համար կը հաս-
 կընայ որ սրտի կատարելութիւնները
 մարմնական կատարելութիւններէն աւե-
 լի սիրելի են , որոնք յիմարաբար ընտ-
 րել տուին իրեն բռնաւոր և զազանա-
 բարոյ ամուսին մը :

Խեղճ մարդիկ , թողումք որ կարգու-
 ին օրով հետեւ չենք կրնար զանոնք արգե-
 լուլ խելքով տարի մը չքէր զիրար կա-
 տեն , կանխածեն , և կը կուրծտին :

(Ծարուհիներ)

ԱՁԴ

Արեւելեան Թատրոնի դերասաննե-
 րէն Պ . Թ . Ֆասուլեանիւն յառա-
 ջիկայ շաբաթուն հինգշաբթի գիշերն՝
 ի նպաստ իւր՝ Սանդուխդ յորջորջուած
 անունի ողբերգութիւնը ներկայացը-
 նելու՝ մեծաւ աշխատանօք հրամանին
 ընդունած ըլլալով , Արգոյ Հասարակու-
 թիւնն իր ներկայացման հանդիսին կը
 հրաւիրէ . խոստանալով՝ որ յուսացած
 դոհունակութիւնն ստանալու չանքը ըստ
 կարեաց , ջախտի զլսնայ :

ԽՄԲԱԳԻՐ—ՏՆՕՐԻՆ
 Ա . ՃԵՎԱՀԻՔԱՆՆ

Ա . ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՏՊԱՐԱՆ